Հավելված 1

ՀՀ ներքին գործերի նախարարի

2024 թվականի մայիսի 01 »-ի N 1034 -Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի տրամադրման վարչության ապաստանի հայցի քննման բաժնում փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության վերակազմավորմամբ, աշխատանքների ծավալների ավելացմամբ պայմանավորված, անհրաժեշտություն է առաջացել ապաստանի տրամադրման վարչության ապաստանի հայցի քննման բաժնում ներգրավել պայմանագրային հիմունքներով համապատասխան փորձագետ (թվով 1):

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) առնվազն միջնակարգ կրթություն.
2) հայերենի իմացություն.
3) աշխատանքային ստաժ չի պահանջվում.
4) համապատասխան ոլորտի իրավական ակտերի իմացություն և անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մինչև վեց ամիս ժամկետով

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Մասնակցել ապաստան ստանալու դիմումների վարույթներին.
2) Մասնակցել է ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման աշխատանքներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավական, սոցիալական և այլ բնույթի օժանդակության տրամադրման աշխատանքներին.

3) Մասնակցում է ապաստանի հայցի վերջնական մերժում ստացած անձանց տվյալները Ծառայության համապատասխան ստորաբաժանմանը փոխանցման աշխատանքներին՝ ՀՀ-ից նրանց արտաքսման գործընթացը կազմակերպելու նպատակով:

5. Հաշվետվությունների ներկայացման և դրանց գնահատման արդյունքների ամփոփիչ ժամկետները

1) Փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է եռամսյակային կտրվածքով՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6. Աշխատանքների գնահատման չափանիշները

1) Ընդունել ապաստանի դիմումներ և տրամադրել խորհրդատվություն ապաստանի ընթացակարգերի վերաբերյալ.

2) Մուտքագրել ապաստան հայցողների վերաբերյալ հավաքագրված տեղեկություններ.

3) Կատարել հարցումներ և սահմանված ժամկետից ավելի բացակայող ապաստան հայցողների ուղեգրերն անվավեր ճանաչել.

4) ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ստացած անձի դիմումի հիման վրա պատրաստել ՀՀ-ում փախստականի կարգավիճակը դադարեցնելու վերաբերյալ որոշումների նախագծեր: